ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 դեկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

181
(2661)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 155

2021 թվականի դեկտեմբերի 8-ին՝ Ազգային ժողով- Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը հարց ուղղեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ հղում անելով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարությանը, որտեղ նշվում էր, որ հայկական եւ ադրբեջանական կողմերին ներկայացված ռուսական առաջարկի (Լավրովի պլան) իրականացման դեպքում Լեռնային Ղարաբաղին հարակից վերջին երկու շրջանների (Քելբաջարի եւ Լաչինի) հանձնումը Ադրբեջանին պետք է կապվեր Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշման հարցի հետ:

«Երբեք բանակցային գործընթացում եւ փաստաթղթերում չի ֆիքսվել, որ այդ պոտենցիալ հանրաքվեն լինելու է Լեռնային Ղարաբաղում: Հասկանո՞ւմ եք՝ չի ֆիքսվել ոչ մի անգամ տարածք, թե որտեղ է տեղի ունենալու այդ հանրաքվեն: Հասկանո՞ւմ եք: Էստեղ էնքան նրբություններ կան: Ասում են՝ окончательный статус Нагорного Карабаха (Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակ): Բայց ի՞նչ է լինելու էդ կարգավիճակը, ո՞նց է որոշվելու: Ի՞նչ է լինելու վերջում: Որեւէ մեկը էս հարցի պատասխանները գտե՞լ է»,- հարցադրում արեց Փաշինյանը:

Ի գիտություն Փաշինյանի՝ 2007-ին Մադրիդում հակամարտության կողմերին ներկայացված սկզբունքների առաջին իսկ կետում ամրագրվում է.

«1) ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ եւ իրական արտահայտում: 2) Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կողմերը կհամաձայնեցնեն ապագա բանակցություններում, ինչպես նկարագրված է 9-րդ կետում: ԼՂ բնակչություն ասելով՝ հասկացվում են 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչեւ հակամարտության սկիզբը: Պլեբիսցիտի ընթացքում հարցի կամ հարցերի ձեւակերպման սահմանափակում չի լինելու, եւ կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն»: Հայաստանի ղեկավարությունը, այսինքն, հերթական անգամ անում է հայտարարություններ, որոնք իրականությանը չեն համապատասխանում:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս 20 օր առաջ ահազանգել էր, որ «Արցախն անկլավ դառնալու» վտանգի առաջ կարող է կանգնել: Այսօր, ցավոք, մեր տեղեկություններն իրականություն են դարձել, ու Արցախի մեր՝ ավելի քան 120 հազար քաղաքացիներն արդեն չորրորդ օրն անընդմեջ ոչ միայն շրջափակման մեջ են գտնվում, այլեւ հումանիտար աղետի առաջ են կանգնած: Ադրբեջանը խոչընդոտում է նաեւ գազամատակարարումը, ու Արցախն արդեն 3-րդ օրն է՝ նաեւ գազ չունի: Բացի այդ, մոտ 20 օր առաջ արդեն Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցների հետ Արցախի գլխին կախված վտանգի մասին ծանր զրույց էր ունեցել, նրանց մոտ սրտնեղել, թե այս իրավիճակում Հայաստանը մենակ է մնացել, ու եթե հանկարծ Ադրբեջանը որոշի սադրանքի դիմել, հայտնի չէ, թե ինչ է լինելու: ՔՊ-ական պատգամավոր Վիգեն Խաչատրյանին խնդրեցինք մեկնաբանել, թե մոտ 20 օր առաջ ինչ են զրուցել վարչապետ Փաշինյանի հետ: «Հիմա դժվար մտաբերեմ այդ մանրամասները, բայց Ադրբեջանի այս պահվածքը սպասելի էր. մենք պետք է նման իրադարձությունների նախապատրաստված լինենք»,- նշեց նա: «Մեր հարցը հենց այդ մասին է, որ իմանալով գլխներիս գալիքը՝ իշխանությունը կանխող ի՞նչ քայլեր է արել»,- ավելի հստակ ձեւակերպումով դիմեցինք իշխանական պատգամավորին, ինչին ի պատասխան՝ արձագանքեց. «Դուք ուշադիր հետեւե՞լ եք Հայաստանի պաշտոնատար այրերի ուղեւորություններին աշխարհի տարբեր մայրաքաղաքներ ու քաղաքներ: Բա էդ բոլորն ինչի՞ համար են արվում: Նրանք հո զբոսաշրջիկ չե՞ն: Կամ պաշտպանության նախարարի, Անվտանգության խորհրդի նախագահի՝ տարբեր երկրներ այցերը...»: Թերեւս իրադարձություններն ու գործընթացներն են խոսում եւ վկայում, թե իրականում «աշխարհի մայրաքաղաքներում» հայ պաշտոնյաներն ինչ են արել, ինչով են զբաղվել. Հայաստանին պատուհասած վտանգնե՞րն են ներկայացրել, թե՞ զբոսաշրջիկի կարգավիճակով ամենատարբեր «տուրերի» են մասնակցել: Փաստն այն է, որ արդեն 4-րդն օրն է՝ Արցախի մեր հայրենակիցների գլխին ցեղասպանվելու սուր է կախված, բայց «աշխարհի մի քանի մայրաքաղաքները», բացի «կոչ անելուց», ուրիշ որեւէ կերպով հավանական ոճրագործությունը չեն էլ փորձում կանխել:

«Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան այն մասին, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ստուգումներ է սկսել իրականացնել ՀՀ արտաքին գործերի եւ էկոնոմիկայի նախարարություններում: Ինչ կտան այս ստուգումները՝ ժամանակը ցույց կտա. մենք կհետեւենք զարգացումներին: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Պետական վերահսկողական ծառայությունը ստուգումներ է անում Պաշտպանության նախարարությունում, Քրեակատարողական ծառայությունում. բոլոր պետական կառույցներին եւ պաշտոնյաներին կցված ավտոմեքենաներն են ստուգվում: Բանն այն է, որ ՊՎԾ-ն կասկածներ ունի, որ միգուցե պաշտոնյաների մեքենաների կատալիտիկ չեզոքացուցիչները կամ բոլորին հայտնի «катализатор»-ները գողացել են ու վաճառել, գումար աշխատել:

ՀՀ ոստիկանությանը խաբել են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ հաշվեքննիչ պալատը այս տարվա օգոստոսի 15-ից մինչեւ հոկտեմբերի 28-ը հաշվեքննություն է իրականացրել ՀՀ ոստիկանությունում եւ հայտնաբերել մի շարք անհամապատասխանություններ: Այսպես, ՀՀ ոստիկանության կարիքների համար նախորդ տարվա դեկտեմբերին Լոռու եւ Շիրակի մարզերի հերթապահ պարեկային մեքենաների համար համացանցային ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպվել է գնման ընթացակարգ: Հաղթող ճանաչվել է «UOU սիսթեմս» ընկերությունը, որի հետ էլ պայմանագիր է կնքվել այս տարվա հունվարի 26-ին: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 145 մլն 320 հազար դրամ: Հետո պարզվել է, որ այս ընկերությունը մատուցել է թերի ծառայություն: Բացի այս, մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է հստակ պահանջ, ըստ որի՝ տեսախցիկները պետք է ունենան մեքենաների պետհամարանիշների ճանաչման ֆունկցիա 300կմ/ժ արագությամբ շարժվելիս: Ավելին՝ մատակարարը ՀՀ ոստիկանություն ներկայացրել է ցպահանջ գրություն, ըստ որի՝ ABETECHS GmbH ընկերության գործադիր տնօրենը հավաստում է, որ տեսախցիկները կարող են տարբերակել եւ ճանաչել պետհամարանիշները մինչեւ 400 կմ/ժ արագությամբ շարժվելիս: Պատասխանատու ստորաբաժանումը, առանց փորձաքննության կամ ստուգաչափման, հիմք ընդունելով գրությունը, տվել է դրական եզրակացություն, որ մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին, բայց հետո ոստիկանության եւ Շիրակի մարզի պարեկային ծառայության աշխատակիցների կողմից նախնական փորձարկվել է տեսախցիկների՝ պետհամարանիշների ճանաչման ֆունկցիան արագության ընթացքում, ու արձանագրվել է, որ դրանց առավելագույն արագությունը, որի ժամանակ կարող էին ճանաչել մեքենայի պետհամարանիշները, 220-230կմ/ժ է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս թեմայի հետ կապված ոստիկանության ներսում ծառայողական քննություն է իրականացվել: Ոստիկանության պետի հանձնարարությամբ դրա արդյունքում կազմված փաստաթղթերը այս տարվա օգոստոսի 22-ին ուղարկվել են ՀՀ դատախազություն, որի հիմքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում օգոստոսի 27-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԻՄՔԸ ԴՐՎԵԼ Է ՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ

Ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանն այն համոզմանն է, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ միայն արցախահայությանը, այլ նաեւ Հայաստանում ապրողներին ցեղասպանության շեմին է կանգնեցրել: «Հիմա էլ ասում է, թե՝ վա՜յ, էս ի՞նչ է կատարվում, վա՜յ, հասե՛ք, միջազգայի՛ն հանրություն. նա նաեւ լավ գիտի, որ միջազգային հանրությունը, մեծ հաշվով, թքած ունի իր վրա»:

Հիշեցնենք, որ Արցախն արդեն երեք օր է՝ շրջափակման մեջ է, Լաչինը փակ է, լցակայաններում վառելիք առաջնահերթ կտրամադրվեն շտապ օգնության ծառայությանը, հասարակական տրանսպորտին եւ հատուկ ծառայություններին: Քաղաքացիներին կոչ է արվում խնայողաբար օգտագործել վառելիքը եւ տրանսպորտային միջոցներն օգտագործել խիստ անհրաժեշտության դեպքում:

«Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանին:

-Պարոն Վրթանեսյան, Արցախն արդեն երեք օր է՝ շրջափակման մեջ է, նաեւ գազ չունի եւ, փաստորեն, հումանիտար աղետի առջեւ է կանգնած: Ի՞նչ գնահատական եք տալիս:

-Դժվար է գնահատական տալ, քանի որ ակնհայտ է իրավիճակը: Միայն ասեմ, որ այս ամենը շատ սպասելի էր: Այս ամենի մասին զգուշացվել է դեռեւս 2020 թվականի նոյեմբերի 10-ից, եւ, ցավոք, Նիկոլ Փաշինյանի վարչակարգն ամեն ինչ արել է, որ մենք գանք ու հասնենք այս իրավիճակին: Իհարկե, հիմքը դրվել է 44-օրյա պատերազմի ժամանակ պարտությունով, բայց դրանից հետո էլ՝ այդ եռակողմ հայտարարությամբ, երբ հայկական զինուժը դուրս բերվեց Քաշաթաղից ու Քարվաճառից: Այն քայլերը, որոնք արվեցին այդ եռակողմ կապիտուլյացիոն հայտարարությունից դուրս, խորացրեցին ճգնաժամը: Բանակի խայտառակ վիճակը եւս բերել է Նիկոլ Փաշինյանն իր գործողություններով, քանի որ վտանգ էր տեսնում իր անձնական իշխանության համար: Ադրբեջանցիների ամեն մի քայլ նույն նոյեմբերի 16-ին եւ այլ գործողություններով քայլ առ քայլ վերահսկողություն սահմանեցին կարեւոր ռազմավարական բարձունքների վրա: Կտրուկ թուլացվեց պաշտպանական պոտենցիալը, մեկը մյուսի հետեւից առաջ քաշվող պահանջները կատարվում էին, եւ դա բերեց նրան, որ Ադրբեջանն առանց որեւէ լուրջ դիմադրության փակեց նաեւ այս ճանապարհը: Ոչ թե ռազմական օպերացիա է պետք, այլ բավական է կապիկների բերեն բնապահպանի անվան տակ եւ ճանապարհ փակեն: Այդ խմբում են հատուկ ծառայության անդամներ, մարզիկներ, որոնք ո՛չ բնապահպան են, ո՛չ էլ քաղհասարակության տեսք ունեն: Ընդհանուր գիծը հայերին Արցախից դուրս մղելն է, չնայած իրենք ախորժակ ունեն ամբողջ Հայաստանի համար: Ուժի սպառնալիքով, ռազմական գործողություններով, այսպիսի դիմադրությամբ Ադրբեջանը հիբրիդային պատերազմ է վարում Հայաստանի դեմ, եւ դրան դիմադրություն դեռ չկա:

-Ադրբեջանը կգնա՞ զենքի ուղիղ կիրառման:

-Նախ՝ եկեք հասկանանք՝ ցեղասպանություն իրականում կամ իրավաբանական սահմանմամբ ինչ է նշանակում. դա ամբողջ ազգի կամ այդ ազգի ներկայացուցիչների, խմբի նպատակուղղված ոչնչացումն է: Ադրբեջանն այդ հարցում որեւէ խնդիր, արգելակ չունի, բացի հայերի դիմադրությունից: Եթե դիմադրության գործոնը եւ պայքարը հանում ենք, ապա միանգամից ստանում ենք ցեղասպանություն: Եվ այն գաղափարը, որ նա դրել էր իր քարոզարշավի հիմքում՝ եթե մենք իրենց թշնամի չորակենք, իրենք չեն որակի, իրականության հետ կապ չունի եւ խաբեություն էր, ու Նիկոլ Փաշինյանն էլ շատ լավ հասկանում է իրավիճակը: Նա իր անձնական նպատակների համար մեզ բերել, հասցրել է ցեղասպանության շեմին ու հիմա էլ զարմանում է եւ ասում, որ չենք կարող դիմադրել, եւ միջազգային հանրությունից է օգնություն խնդրում այն դեպքում, երբ վստահ է, որ նրանք չեն արձագանքի: Այս ամենի մեղավորը հենց Նիկոլ Փաշինյանն է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

«Երեկ Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակում հանդիպեցի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոյի, հաղորդակցման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունու հետ»,- գրել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

Ահազանգեցի Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանին կապող միակ կենսական ճանապարհի արգելափակման, Արցախի գազամատակարարման դադարեցման եւ դրանց հետեւանքով Արցախում լրջագույն մարդասիրական խնդիրների վերաբերյալ:

Քննարկեցինք ստեղծված իրավիճակը եւ հումանիտար հետեւանքները:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները զբաղվում են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի դեմ ներկայացված հանցագործության մասին հաղորդման դիմումով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահների ձեռքում կան տվյալներ, որ Ավանեսյանի ընտանիքի հետ կապված «Արմֆարմացիա» ընկերությունը գնումների գործընթացում ուշագրավ ակտիվություն է ցուցաբերել, ինչը շահերի բախում է: Թե ինչ հետեւանքներ կունենա այս քրգործը Անահիտ Ավանեսյանի գործունեության վրա, դժվար է ասել. ամեն դեպքում, մենք կհետեւենք զարգացումներին: Հիշեցնենք, որ այս տարվա նոյեմբերին անդրադարձել էինք նախարարի մորը պատկանող ընկերությանը: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացել էր, որ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի մորը՝ Գերագույն խորհրդի նախկին պատգամավոր Մարգուշ Վարդանյանին նախկինում պատկանած անշարժ գույքի մասով դատախազությունում երբեք ուսումնասիրություն չի եղել: Խոսքը Երեւանի Պուշկին փողոցում գտնվող «Վիգմոր» կլինիկայի շենքի մասին է, որն, ըստ Ավանեսյանի պնդումների, այժմ իրենց չի պատկանում: Մյուս կողմից՝ գրել էինք, որ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ընտանիքում «կռիվ է ընկել», եւ «Արմֆարմացիա»-ն դիմել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողով ու խնդրել Առողջապահության նախարարության նկատմամբ տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցել՝ արգելված պետական օժանդակության եւ պետական մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի հատկանիշներով:

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՀԻՆ ՇԵՆՈՒՄ

«Ինչ ասեմ, մեզ մոտ այս պահին նորմալ է, հետո չգիտեմ՝ ինչ կլինի»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Շուշիի շրջանի Հին Շեն համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը:

«Մեզ մոտ՝ գյուղում՝ ճանապարհին մնացած շուրջ 30 բնակիչ կա. կարողացել ենք մարդկանց նորմալ տեղավորել, սննդամթերքի պաշար ունենք, բայց թե ինչքան կտեւի այս իրավիճակը, չգիտենք. դե երեկվանից էլ գազ չունենք, փայտով ենք ջեռուցում իրականացնում»,-նշեց նա:

Նշենք, որ դեկտեմբերի 12-ին՝ ադրբեջանցիների կողմից Բերձորի ճանապարհը փակելուց հետո, ճանապարհին մնացած մարդկանց մի մասին տեղափոխել են Շուշիի շրջանի Լիսագոր, Հին Շեն, Եղցահող գյուղեր, մարդկանց մի մասին էլ տեղափոխել են Սյունիքի մարզ, մասնավորապես՝ Գորիս քաղաք:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՉԵՆ ԳՆԱ ՋԻՆՎԱԾ ԿՈՆՖԼԻԿՏԻ

Արդեն երրորդ օրն է՝ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը շարունակում է փակ մնալ, եւ 120 հազար արցախցիներ մնացել են շրջափակման մեջ: Այս օրերին եւ հատկապես երեկ մեղադրական հայտարարություններ են հնչել ռուսական կողմի ուղղությամբ, քանի որ ռուս խաղաղապահներն են տեղակայված Լաչինի միջանցքում: Երեկ նման հայտարարություններ հնչեցին նաեւ խորհրդարանում: Ավելին՝ միայն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների մասնակցությամբ այսօր նաեւ ընդունվեց հայտարարության տեքստ, որում ասվում էր. «Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Ռուսաստանի Դաշնությանը կոչ ենք անում իրականացնել անհրաժեշտ գործողություններ՝ ապահովելու 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված դրույթների լիակատար իրականացումը ռուս խաղաղապահների վերահսկողության գոտում»: Ի վերջո, ի՞նչ մեղավորություն ունի ռուսական կողմը, եւ ինչո՞ւ չի կարողանում կատարել իր խաղաղապահ առաքելությունը: Այս հարցերի պատասխանները «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է պարզել ՌԴ Պետդումայի պատգամավոր, ԱՊՀ գործերի, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի առաջին փոխնախագահ Կոնստանտին Զատուլինից: Նա եւս կիսում էր առկա այն տեսակետը, թե այս ամենը շոու է բնապահպանական ակցիայի անվան տակ: Անդրադառնալով հարցին՝ ինչու ռուս խաղաղապահները որեւէ կերպ չեն միջամտում՝ նա նշեց. «Ես գիտեմ, որ ռուսական կողմը քայլեր է անում, եւ իրավիճակը կշտկվի: Ինչ վերաբերում է քայլերին, իհարկե, ռուս խաղաղապահները չեն ուզում իրավիճակը հասցնել կրակոցների կամ զինված կոնֆլիկտի: Ինչպես հայտնի է, խաղաղապահների առջեւ խնդիր է դրված ապահովել այդ մայրուղու աշխատանքը, եւ նրանք կհասնեն դրան», - նշեց նա:

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅՏՆԻ Է

Կառավարության առաջարկությամբ դեկտեմբերի 16-ին՝ ժամը 11-ին, կգումարվի Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված է 10 նախագիծ, որոնք պատգամավորները չէին հասցրել ամբողջությամբ քննարկել եւ ընդունել:

Նախագծերից մեկով կքննարկվի ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» հարցը: Օրակարգում են նաեւ ««Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», ««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Անվտանգության խորհրդի կազմավորման եւ գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ եւ չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

Կան նախագծեր, որոնք քննարկվելու են միայն երկրորդ ընթերցմամբ, սակայն կան նաեւ այնպիսի հարցեր, որոնք կանցնեն առաջինից երկրորդ ընթերցում:

ԲՈՒՖԵՏԸ «ԹԱՆԿ ՆՍՏԵՑ»

Հայաստանի խորհրդարանի ճաշարանը բավականին «թանկ նստեց» ԱԺ բյուջեի վրա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ազգային ժողովի ճաշարանի միայն սպասքի համար ծախսվել է 5 մլն դրամ. գնվել է ափսե, գդալ, աղաման, հացաման, կաթսա, կացին, դանակ, բռնիչ եւ այլն: Մեզ հայտնի դարձավ, որ մրցույթին մասնակցել է Ա/Ձ Ռոբերտ Մելիքյանը, որն էլ հաղթող է ճանաչվել: Բացի այս, եւս 5 մլն դրամ Հայաստանի Ազգային ժողովը պետական միջոցների հաշվին խորհրդարանի ճաշարանի ճաշասեղանների համար է ծախսել: Մեզ հայտնի դարձավ, որ «մեկ անձից գնման» ընթացակարգով գնվել է չորստեղանի ճաշասեղան՝ աթոռներով: Թվով 25 հատ սեղան է գնվել, միավորի արժեքը կազմել է 200 հազար դրամ:

Տեղեկացնենք, որ դեռեւս հոկտեմբերի 6-ին, կառավարության որոշմամբ, 31 մլն դրամ հատկացվել էր ԱԺ բուֆետ-ճաշարանի բարեկարգմանը:

Կառավարությունը խորհրդարանին թույլ էր տվել աշխատանքներն իրականացնել առանց գնման մրցույթի՝ «մեկ անձից գնելու» ընթացակարգով՝ «ստեղծված իրավիճակում գնման անհետաձգելի պահանջի եւ գնման այլ ձեւերի կիրառման ժամկետի անհնարինությամբ» պայմանավորված:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ԼԱՉԻՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը շարունակում է փակ մնալ: Երեկ հայտարարություններ են հնչել միջազգային հանրությունից, որոնք Ադրբեջանին կոչ են անում բացել ճանապարհը:



Ֆրանսիան կոչ է անում վերականգնել Լաչինի միջանցքով երթեւեկությունը առանց նախապայմանների: Այս մասին ասված է Ֆրանսիայի ԱԳՆ տարածած հայտարարության մեջ:

Փարիզում նաեւ հիշեցրել են կրակի դադարեցման մասին 2020 թ. նոյեմբերի 9-ին ընդունված եռակողմ հայտարարության դրույթների պահպանման անհրաժեշտության մասին:

Լաչինի միջանցքով երթեւեկության դադարեցումը ծանր մարդասիրական հետեւանքներ ունի եւ վնասում է Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ խաղաղության գործընթացին: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Նեդ Փրայսը. փոխանցում է ՏԱՍՍ-ը:

«Մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը վերականգնել ազատ տեղաշարժը միջանցքով: Անընդունելի է Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչությանը վնաս հասցնելը»,- նշել է նա:

Ադրբեջանցիների կողմից Լաչինի միջանցքի փակումը համակարգված բնույթ է կրում եւ նպատակ ունի փակել Արցախի միակ մատակարարման ուղին. այս մասին հայտարարություն են տարածել ԱՄՆ կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնը, Գաս Բիլիրակիսը, Ջեքի Սփիերը, Դեյվիդ Վալադաոն եւ Ադամ Շիֆը:

«Մենք դատապարտում ենք Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից ձեռնարկված ագրեսիվ գործողությունները: Շատ մտահոգիչ է, որ ադրբեջանցիներին թույլ է տրվում ազատ կերպով բողոքի ակցիա անել միայն այն ժամանակ, երբ դա սպառնում է հայերի կյանքին: Նրանց կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը համակարգված բնույթ է կրում եւ նպատակ ունի փակել տրանսպորտի տեղաշարժը, դեպի Արցախ սննդի, բժշկական պարագաների եւ այլ կենսական նշանակության ապրանքների մատակարարման միակ ուղին, ինչպես նաեւ սահմանափակել Արցախի ժողովրդի ազատ տեղաշարժը»,- նշված է ԱՄՆ կոնգրեսականների հայտարարությունում:

Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահները նաեւ անդրադարձել են Ադրբեջանի կողմից Արցախի գազամատակարարման արգելափակմանը:

«Ըստ լրացուցիչ տեղեկությունների՝ Ադրբեջանը նաեւ փակել է տարածքի բնակիչների համար բնական գազի մատակարարման գլխավոր աղբյուրներից մեկը՝ ջերմաստիճանի անկման պայմաններում տասնյակ հազարավոր մարդկանց թողնելով առանց ջեռուցման, ինչպես արել էր այս տարվա մարտին: Ադրբեջանի կողմից այս կենսական նշանակության գծերի փակումը կամ փակման սպառնալիքը եւս մեկ անգամ նրանց ձեռքում զենք է դարձնում կարեւոր ենթակառուցվածքները եւ հումանիտար ճգնաժամ ստեղծում Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի համար: Սրան նախորդել է ոտնձգությունների շարքը հայ ժողովրդի դեմ, որը քաջալերվում է Ալիեւի վարչակարգի ճոռոմ հռետորաբանությամբ: Այդ ոտնձգությունները փաստագրված են»,- նշել են կոնգրեսականները:

Նրանք նաեւ ԱՄՆ-ին եւ նրա եվրոպական գործընկերներին կոչ են արել օգտագործել իրենց տրամադրության տակ եղած բոլոր դիվանագիտական գործիքները Ադրբեջանի կողմից ստեղծված այս ճգնաժամը դադարեցնելու համար: Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահները կոչ են արել նաեւ Ալիեւին բերել բանակցությունների սեղանի շուրջ Մինսկի խմբի եւ խաղաղության այլ բազմակողմ գործընթացների միջոցով եւ «ապահովել Արցախի ժողովրդի ներգրավվածությունն այդ քննարկումներում»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արցախի նկատմամբ ադրբեջանական ցեղասպան քաղաքականության հերթական դրսեւորումների արդյունքում ստեղծված իրավիճակը քննարկելու եւ Արցախի հանդեպ միջազգային զորակցություն ապահովելու համար 2022թ. դեկտեմբերի 13-ի երեկոյան Հայաստանում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում տեղի է ունեցել Արցախի Հանրապետության կառավարության եւ ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի ներկայացուցիչների հանդիպումը:

Արցախի Հանրապետության կառավարության ներկայացուցիչները ներկայացրել են ստեղծված իրավիճակը, հումանիտար ճգնաժամի իրական վտանգը եւ ադրբեջանական՝ էթնիկ զտում եւ հայրենազրկում հետապնդող քաղաքականության վերջին դրսեւորումները: ՀՅԴ Հայ դատի համակարգի ներկայացուցիչները տեղեկություններ են փոխանցել Հայ դատի աշխարհասփյուռ ցանցի կողմից ձեռնարկված եւ նախատեսվող միջոցառումների, ինչպես նաեւ գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

Երկուստեք կարեւորվել է ստեղծված ծանր իրավիճակում համազգային ջանքերի կենտրոնացման եւ համատեղ աշխատանքով մեր ժողովրդի առջեւ ծառացած գոյութենական մարտահրավերի հաղթահարման կարեւորությունը:

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աշխատանքներ են տարվում Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներ Վլադիմիր Պուտինի, Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի եռակողմ հանդիպման համաձայնեցման ուղղությամբ, սակայն նրանք առնվազն կկարողանան շփվել ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովի շրջանակներում:

«Դուք գիտեք, որ նախատեսվում է ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպում, որտեղ առնվազն երեքը (առաջնորդները) հնարավորություն կունենան խոսել գոնե կուլուարներում: Թե հետո ինչպես կստացվի, աշխատանքը դեռ ընթացքի մեջ է», - ասել է Պեսկովը: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ դեկտեմբերի վերջին տեղի կունենա ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպումը: Այն կանցկացվի Սանկտ Պետերբուրգում:

ԱՄՆ–Ն ԿՈՉ Է ԱՐԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Լաչինի միջանցքով երթեւեկության դադարեցումը ծանր մարդասիրական հետեւանքներ ունի եւ վնասում է Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ խաղաղության գործընթացին. այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Նեդ Փրայսը. փոխանցում է ՏԱՍՍ-ը: «Մենք հստակ հայտարարել ենք, որ Լաչինի միջանցքի փակումը ծանր մարդասիրական հետեւանքներ ունի. հետաձգում է խաղաղության գործընթացը,- ասել է Փրայսը:- Մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը վերականգնել ազատ տեղաշարժը միջանցքով»:

«Էներգետիկ ենթակառուցվածքների աշխատանքի ցանկացած դադարեցում, եւ մենք տեսել ենք էներգետիկ ենթակառուցվածքների աշխատանքի դադարեցման մասին հաղորդագրություններ, կարող է խորացնել հումանիտար ճգնաժամը, հատկապես՝ ձմռան ամիսներին: Անընդունելի է Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչությանը վնաս հասցնելը»,- նշել է նա:

ՈՐՈՇՈՒՄ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Ռուբեն Հայրապետյանը, 2002-2018 թվականների ընթացքում զբաղեցնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Միություն) նախագահի պաշտոնը, Աճառյան փողոցի 35/31 հասցեի հողամասերը Միության համար իբր ոչ նպատակահարմար համարելու հիմքով՝ կամովին հրաժարվելու միջոցով տրամադրել է Երեւանի քաղաքապետարանին:

Միությունը զրկվել է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, որից հետո Ռ.Հ.-ն, շարունակելով իր հանցավոր մտադրությունը, դրդել է Երեւանի քաղաքապետարանի՝ գույքը տնօրինելու իրավասություն ունեցող, դեռեւս քննությամբ չպարզված պաշտոնատար անձանց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու եղանակով Աճառյան փողոցի երեք հողամասերը հրապարակային ձեւական աճուրդների միջոցով օտարել իր հետ փոխկապակցված անձանց՝ Երեւանի քաղաքապետարանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, ինչպես նաեւ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված վերոնշյալ հողամասերը: Մասնավորապես, Երեւանի քաղաքապետի՝ 2002 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ՝ Աճառյան փողոցին հարող տարածքում ֆուտբոլի մանկապատանեկան դպրոց հիմնադրելու նպատակով Միությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է ընդհանուր 14,0 հա հողատարածք: Ռ.Հ.-ն, օժտված լինելով Միության շահերը ներկայացնելու, պայմանագրեր կնքելու եւ լիազորագրեր տալու իրավասություններով, սեփականության իրավունքով Միությանը պատկանող՝ Աճառյան փողոցի 35/31 հասցեում գտնվող ընդհանուր 14 հա հողակտորից 0.3026 հա եւ 2.39295 հա (ընդհանուր՝ 26.955,5 քմ) հողակտորները իր սեփականությունը դարձնելու նպատակով 2014 թվականի նոյեմբերի 25-ին դիմում է ներկայացրել Երեւանի քաղաքապետին եւ Միության անունից կամովին հրաժարվել է նշված հողակտորներից իբր շինարարական աշխատանքների իրականացումը ոչ նպատակահարմար համարելու պատճառաբանությամբ: Երեւանի քաղաքապետի որոշումով՝ 26.955,5 քմ մակերեսով հողակտորը ճանաչվել է Երեւան համայնքի սեփականություն եւ բաժանվել է 8985,35-ական քմ չափերով երեք հավասար մասերի, որոնց, որպես առանձին գույքային միավորների, համապատասխանաբար տրամադրվել են հասցեներ (Աճառյան 35/84, 35/85 եւ 35/86): Այնուհետեւ Ռ.Հ.-ն, շարունակելով հանցավոր մտադրությունը, դրդել է Երեւանի քաղաքապետարանի՝ գույքը տնօրինելու իրավասություն ունեցող, դեռեւս քննությամբ չպարզված պաշտոնատար անձանց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու եղանակով հրապարակային ձեւական աճուրդների միջոցով օտարել Աճառյան փողոցի 35/84, 35/85 եւ 35/86 հողամասերը իր հետ փոխկապակցված անձանց՝ Ա.Ս.-ին, Ս.Ս.-ին եւ Ա.Գ.-ին: Արդյունքում 2015 թվականի հունվարի 26-ին կնքված պայմանագրերով 454 մլն 820 հազար դրամ շուկայական արժեք ունեցող Աճառյան 35/84, 35/85 եւ 35/86 հողամասերը ընդամենը 169 մլն 820 հազար 910 դրամով օտարվել են Ռ.Հ.-ի հետ փոխկապակցված վերոնշյալ անձանց՝ Երեւանի քաղաքապետարանին պատճառելով 284 մլն 999 հազար 90 դրամի վնաս: Այնուհետեւ Ռ.Հ.-ն հանցավոր ճանապարհով ստացված գույքի ձեռքբերումը լեգիտիմացնելու եւ իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով ձեւական պայմանագրեր կնքելու եւ օրինական ճանապարհով գույքերի ձեռքբերման պատրանք ստեղծելու միջոցով օրինականացրել է Աճառյան 35/84, 35/85 եւ 35/86 հասցեներում գտնվող, առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 161 մլն 733 հազար դրամ կադաստրային արժեքով 8985,35-ական քմ չափերով 3 գույքերը՝ նախնական համաձայնության գալով իր հետ փոխկապակցված Ա.Ս.-ի, Ս.Ս.-ի եւ Ա.Գ.-ի հետ: 2015 թվականի հունվարի 26-ին կնքված առուվաճառքի պայմանագրերով վերոնշյալ հողամասերն օտարվել են աճուրդներում հաղթող ճանաչված Ա.Ս.-ին, Ս.Ս.-ին եւ Ա.Գ.-ին: Դրանից 2 ամիս անց՝ 2015 թվականի մարտի 15-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով 35/85 եւ 35/86 հասցեների հողակտորները Ա.Գ.-ի եւ Ս.Ս.-ի կողմից օտարվել են թիվ 35/84 հողակտորը ձեռք բերած անձին՝ Ա.Ս.-ին, որից հետո Երեւանի քաղաքապետի՝ 2015 թվականի մարտի 26-ի թիվ 880-Ա որոշումով Աճառյան փողոցի 35/84, 35/85 եւ 35/86 հասցեներում գտնվող ընդհանուր 26.955,5 քմ մակերեսով հողամասին կրկին տրվել է մեկ՝ Աճառյան փողոց 35/84 հասցեն: Այնուհետեւ Ա.Ս.-ն հողատարածքից 6.955,5 քմ մակերեսով հողատարածքը 2015 թվականի ապրիլի 17-ի նվիրատվության պայմանագրով օտարել է Ռ.Հ.-ի որդուն՝ Ռ.Հ.-ին, իսկ վերջինս իր հերթին ստացված հողատարածքից 2.023 քմ 2016 թվականի դեկտեմբերի 28-ին նվիրատվության պայմանագրով օտարել է քրոջը՝ Լ.Հ.-ին: Բացի այդ, Ա.Ս.-ն հողատարածքից 3.000-ական քմ մակերեսներով 2 եւ 14.000 քմ մակերեսներով հողատարածքները համապատասխանաբար 2015 թվականի մայիսի 20-ի, նույն թվականի հունիսի 11-ի եւ 2016 թվականի հուլիսի 8-ի նվիրատվության պայմանագրերով օտարել է ֆեդերացիայի նախագահի հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Կ.Հ.-ին, Գ.Ս.-ին եւ Օ.Մ.-ի որդուն՝ Ռ.Մ.-ին: Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ հսկող դատախազի կողմից դեկտեմբերի 14-ին որոշում է կայացվել Ռ.Հ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում. մեղադրանք ներկայացնելու համար որոշումն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԽՈՒՍԱՓՈՂՆԵՐԻՆ

Armlur.am-ին հայտնի դարձավ որ Անուշավան Գյուլզադյանին մեղադրանք է առաջադրվել: Նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւանի թիվ 2 ստորաբաժանումում որպես պահեստազորային, հրաժարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022թ. հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշմամբ հայտարարված վարժական հավաքներին մասնակցելուց: Դրա վերաբերյալ ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւանի թիվ 2 տարածքային ստորաբաժանումում 2022թ. հուլիսի 4-ին կատարել է ծանուցագիր ստանալուց եւ վարժական հավաքներին մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ գրառում՝ այդպիսով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները խախտելով, այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում խուսափել է 2022 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 30-ը անցկացվող վարժական հավաքներից:

ՄԱՀԱՑԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Էջմիածնում 66-ամյա տղամարդը ինքնասպանություն է գործել: Ըստ բնակիչների՝ նա բնակվում էր կնոջ եւ 2 որդիների հետ, եւ կատարվածը շոկային է ընտանիքի համար: Վերջիններս չգիտեն որեւէ պատճառ, ինչի հետեւանքով նա կարող էր գնալ այդ քայլին: Նշենք, որ ընտանիքի անդամները տղամարդուն գտել էին տանը կից ավտոտնակում, որտեղ նա կախված է եղել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

ԱՀ առողջապահության նախարարությունից հայտնում են, որ Ադրբեջանի կողմից Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհի եւ գազամատակարարման արգելափակման հետեւանքով այս պահի դրությամբ ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում ժամանակավորապես դադարեցվել են պլանային վիրահատությունները:

Բուժհաստատություններում ներկա պահին առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղերի եւ բժշկական պարագաների պակաս չկա: Այս պահին ԱՀ ԱՆ «Հանրապետական բժշկական կենտրոն»-ում 11 բուժառու գտնվում է ռեանիմացիոն բաժանմունքում, որից 2-ը գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում: Կան բժշկական հաստատություններ, որոնք ջեռուցվում են դիզվառելիքով (այս պահին խնդիր չկա, բայց պաշարները սուղ են), բայց կան նաեւ բժշկական հաստատություններ, որոնք գազամատակարարման արգելափակման հետեւանքով ջեռուցումը իրականացնում են էլեկտրատաքացուցիչներով: ԱՀ առողջապահության նախարարությունը ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները ստեղծված իրավիճակը պատշաճ կերպով հաղթահարելու համար:

ԾԵԾԻ ԳՈՐԾ

ՉԿԱ Ո՛Չ ԿԱՍԿԱԾՅԱԼ, Ո՛Չ ՄԵՂԱԴՐՅԱԼ

Հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու դեպքից 45 օր անց այդպես էլ գործը չի բացահայտվել. չկա ո՛չ կասկածյալ, ո՛չ մեղադրյալ: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 18-ին անհայտ անձինք հարձակվել եւ ծեծի են ենթարկել Էդգար Ղազարյանին: Ըստ տուժողի՝ դեպքը տեղի է ունեցել իրենց շքամուտքի մոտ, երբ տուն էր վերադառնում վարսավիրանոցից:

Նույն օրը ՔԿ-ում քրեական վարույթ էր նախաձեռնվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելու հատկանիշներով: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ծեծի ենթակելու միջադեպի գործով իրավապահներն անձանց են տարել հարցաքննությունների, սակայն որեւէ արդյունք դեռ չկա, եւ 45 օր անց անգամ կասկածյալ չկա:

Այս իրավիճակից հետո ոստիկանությունում սկսել են քննարկել նաեւ այն վարկածը, թե հենց Էդգար Ղազարյանը կարող էր ծրագրած լիներ իրեն ծեծի ենթարկելու գործը: Իհարկե, սա նաեւ առկա անգործությունը քողարկելու պատրվակ է, քանի որ իշխանական գործչին ծեծի ենթարկելու դեպքում այն կբացահայտվեր ժամերի ընթացքում:

Եվ այսպես, քրեական վարույթի մասին զրուցել ենք Էդգար Ղազարյանի հետ՝ պարզաբանելու մանրամասները:

Էդգար Ղազարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ 15 միջնորդություն է ներկայացրել նախաքննական մարմին, եւ 15 դիմումն էլ մերժվել են: Ավելին՝ դիմել է ՀՀ ոստիկանապետին, որպեսզի իրեն ատրճանակ տան՝ իր իսկ անվտանգությունից ելնելով, սակայն այս դեպքում եւս մերժվել է: Ըստ նրա՝ այս իշխանությունների օրոք այս դեպքը չի բացահայտվի, եւ, նրա կարծիքով, եթե այս իշխանությունները չլինեն, այս եւ այլ դեպքերը կբացահայտվեն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԻՇՈՒՄ ԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Փոխնախարար Ժաննա Անդրեասյանը նշանակվեց կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար: Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում Ժ. Անդրեասյանին լավ են հիշում, քանզի ԿԳՄՍ փոխնախարար եղած ժամանակ նա, աշխատանքային այցով լինելով Տավուշի մարզում, եղել էր նաեւ Ոսկեպարի միջնակարգ դպրոցում, սակայն չէր այցելել դպրոցի ուսուցչանոց, որպեսզի մի քանի բառով երախտագիտություն հայտներ սահմանամերձ դպրոցի ուսուցիչներին, որոնք տարիներ շարունակ պատերազմական վտանգի պայմաններում, ցածր աշխատավարձ ստանալով, իրականացրել են երեխաների կրթության եւ դաստիարակության առաքելությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզպետարանից հայտնեցին, որ 2022թ. նոյեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզում ցանվել է 2827 հեկտար աշնանացան ցորեն: Այս տարի գործում է ցորենի մշակման սուբսիդավորման պետական ծրագիր, տոհմային սերմով յուրաքանչյուր հեկտար ցորեն մշակողներին պետական բյուջեից վճարվելու է 120 հազար, իսկ սովորական ցորտերով ցանածներին՝ 70 հազար դրամ: Այդ գումարները պետք է վճարվեն այն բանից հետո, երբ մարզպետարանի հաձնաժողովը տեղերում կստուգի ցանված ցորենի հեկտարների չափերը:

ՎԹԱՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐ

Դիլիջան խոշորացված համայնքի Հովք գյուղում ապրում են Ադրբեջանից Հայաստան վերաբնակված մեր հայրենակիցները: 2021թ. հուլիսից Հովք բնակավայրի վարչական ղեկավար Հովհաննես Նաղդալյանը հայտնեց, որ գյուղում կատարվել են ճանապարհների խճապատման, գիշերային լուսավորության անցկացման աշխատանքներ: Հովքն ունի 2010թ.-ին կառուցված վարչական կենտրոնի շենք: Փաստացի 480 բնակիչ ունեցող Հովքում չկա մշակութային որեւէ կենտրոն, որտեղ գյուղի բնակիչները կարողանան առնչվել մշակութային կյանքին: Նախկինում գործում էր Հովքը համայնքի կենտրոն Դիլիջան քաղաքի հետ կապող միկրովտոբուսային երթուղի, որը մի քանի ամիս առաջ փակվել է: Հովքի վարչական ղեկավարը հայտնեց, որ գյուղի ընտանիքների մեծ մասը սեփական ավտոմեքենա ունի եւ Դիլիջան քաղաք է մեկնում այդ մեքենաներով: Նրա խոսքերով՝ Հովքի բնակիչների կապն ավանդաբար սերտ է եղել ոչ թե Դիլիջան քաղաքի, այլ Տավուշի մարզկենտրոն Իջեւանի հետ: Հովքում բնակվում են ուսանողներ, որոնք սովորում են Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում: Շաբաթվա աշխատանքային օրերին գործում է Հովք-Իջեւան-Հովք միկրոավտոբուսային երթուղին: Հովք գյուղի ամենացավոտ հիմանախնդիրը բնակավայրում սողանքային գոտու, սողանքից տուժած առանձնատների գոյությունն է: Հ. Նաղդալյանի խոսքերով՝գյուղում կա մոտ 30 վթարային առանձնատուն, որոնք սողանքի հետեւանքով տարբեր աստիճանի վթարային են, սակայն այդ առանձնատների տերերից իրենց տների վթարայնության վերաբերյալ փաստաթուղթ ունեն 1-2 -ը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

ՀՀ քննչական կոմիտեն ակտիվ միջոցներ է ձեռնարկում ընտանեկան բռնության դեմ պայքարի շրջանակներում իրական օրենքից բխող նպատակների կենսագործման, բռնություններից տուժող անձանց իրավունքների պաշտպանության եւ բռնարարների իրական պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու նպատակով:

«ՀՀ քննչական կոմիտեի միայն Արմավիրի եւ Տավուշի մարզային քննչական վարչություններում նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում վերջին ամիսներին բացահայտվել է հիշյալ մարզերում ֆիզիկական ներգործության, անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու հատկանիշներով ընտանեկան բռնության 6 դեպք, որոնց վերաբերյալ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Այսպես, քննությամբ պարզվել է, որ Արմավիրի մարզի (Մրգաշատ գյուղի), Տավուշի մարզի (Լուսաձոր գյուղի, Այրում, Կողբ, Այգեձոր, Ն. Աղբյուր բնակավայրերի) առանձին բնակիչներ տարբեր ամիսների վիճաբանության ընթացքում քաշքշել են իրենց կանանց, հնչեցրել հայհոյանքներ, բռունցքով հարվածներ հասցրել նրանց մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Առանձին դեպքերում անձինք այդ ոտնձգությունները կատարել են՝ խախտելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված նախատեսված անհետաձգելի միջամտություն կիրառելու, այն է՝ տուժող մերձավորին որոշակի հեռավորությունից մոտենալու արգելքի մասին որոշումները: Երկու այլ դեպքերում էլ պարզվել է, որ ծնողները ծեծի են ենթարկել իրենց անչափահաս որդիներին՝նրանց թեթեւ վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ պատճառելով: Նախաձեռնված քրեական վերոնշյալ վարույթներով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ վարույթն իրականացնող մարմինների կողմից մեղադրանքներ են ներկայացվել համապատասխանաբար 6 անձի: Նրանց վերաբերյալ նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննության առնելու նպատակով»,- նշված է հաղորդագրության մեջ:

2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քննված՝ ընտանեկան բռնության վերաբերյալ 53 քրեական գործ ավարտվել է մեղադրական եզրակացությամբ եւ 56 անձի վերաբերյալ ուղարկվել դատարան: ՀՀ քննչական կոմիտեն իրազեկում եւ զգուշացնում է, որ 2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած եւ գործող ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ որոշ հանցատեսակների պարագայում (օրինակ՝ սպանություն, առողջությանը ծանր, միջին կամ թեթեւ վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, հոգեկան կամ ֆիզիկական ներգործություն եւ այլն) հանցանքը մերձավոր ազգականի կողմից կատարելը համարվում է ծանրացնող հանգամանք: Բացի այդ, թեեւ ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով նախատեսված հանցանքը կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի (բողոքի) հիման վրա, այսինքն՝ քրեական հետապնդումն իրականացվում է մասնավոր կարգով, սակայն ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝ անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց, օրինակ՝ հաշտության հիմքով:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ Է ՍՏԵՂԾՎԵԼ

Նախագահ Արայիկ Հարությունյանը ստորագրել է հրամանագիր Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրականացվող մի շարք միջոցառումների մասին:

Համաձայն հրամանագրի՝ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից Ստեփանակերտ-Գորիս մայրուղու արգելափակման հետեւանքով ստեղծված իրավիճակի հետ կապված՝ Արցախի Հանրապետության բնակչության բնականոն կենսագործունեությունն ապահովելու եւ սպառնացող հնարավոր վտանգները կանխելու նպատակով եւ հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը՝ որոշվել է.

- պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտպանական, պետության ու տնտեսության կենսագործունեության համար հատուկ նշանակություն ունեցող օբյեկտները փոխադրել ռազմական դրության աշխատանքային ռեժիմի,
- ըստ անհրաժեշտության՝ սահմանափակել Արցախի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքը, ինչպես նաեւ սահմանել նշված տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմ,
- իրականացնել բնակչության կենսագործունեության, հատուկ պահպանվող օբյեկտների եւ տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաեւ բնակչության կյանքի եւ առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանություն,
- սահմանափակել հավաքների ազատության իրավունքը, արգելել գործադուլների եւ կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումները, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով կասեցնել ռազմական դրության պայմաններում Արցախի Հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչություն եւ այլ գործունեություն ծավալած կազմակերպությունների գործունեությունը,
- սույն հրամանագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու եւ իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով ստեղծել օպերատիվ շտաբ,
- օպերատիվ շտաբի ղեկավարման համար օպերատիվ շտաբի պետ նշանակել Արցախի Հանրապետության պետական նախարար Ռուբեն Վարդանյանին,
- ահմանել, որ շտաբի պետի՝ սույն հրամանագրից բխող ցուցումները պարտադիր են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար,
- Արցախի Հանրապետության կառավարությանը հանձնարարել սույն հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո սեղմ ժամկետում սահմանել սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման եւ շրջանառության հատուկ կարգ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՈՉ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Երեսուն տարի առաջ Հայաստանի տնտեսության լրիվ քայքայումը սկիզբ դրեց գործազրկությանը, արտագաղթին, արտաքին կենսական կապերի ընդհատմանը եւ պետության սնանկացմանը: Հայաստանը ձեռք բերեց անկախություն, բայց Ժողովրդի մեծամասնության համար կյանքի պայմանները դարձան անտանելի:

Մինչեւ այժմ շարունակվում է այդ անհույս վիճակի խորացումը, իսկ «սովի տրամաբանության» եւ մեր ղեկավարների վարած «ճկուն» արտաքին քաղաքականության հետեւանքով մենք զրկվել ենք ռեալ արտաքին օգնությունից:

Երկու՝ միմյանց թշնամի պետությունների հետ հնարավոր չի ունենալ նորմալ արտաքին հարաբերություններ, մանավանդ երբ նրանցից մեկի հետ կա ռազմական փոխօգնության պայմանագիր, եւ բացակայում է բարձր իդեալների վրա հենված սեփական, կայուն (ոչ ճկուն) արտաքին քաղաքականության պլատֆորմը:

Այսօրվա ցիվիլիզացիան թույլ պետություններին չի տալիս գոյատեւելու ոչ մի երաշխիք, խոստումները դիտվում են որպես անցողիկ ցանկություններ, ռեալ գործում են միայն կնքված փոխշահավետ պայմանագրերը:

Մեր դարավոր թշնամիները՝ Թուրքիան եւ Ադրբեջանը, նորից զորքով չոքել են մեր դռանը, եւ մենք ի վիճակի չենք դիմադրելու նրանց ագրեսիային. չուենք ժամանակակից զենքեր ու զինամթերք: Մենք կարիք ունենք արտաքին օգնության:

Մեր առաջնային եւ հրատապ խնդիրը այժմ հանդիսանում է հայ ժողովրդի ինքնության եւ հայրենիքի պահպանումը՝ կապված միջազգային հանրության կողմից ճանաչված երկրի սահմանների անձեռնմխելիության, բարեկեցության ստեղծման ու զարգացման գործընթացների հետ:

Ակնառու են հաշվարկվող փոքր ազգային ռեսուրսները, որոնք բավարար չեն եւ մեզ հնարավորություն չեն տա մոտ ապագայում հաղթահարել ստեղծված բարդ իրավիճակը միայնակ, սեփական ուժերով:

Այժմ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) խիստ կարիք ունի հենման կետի, մի հզոր եւ զարգացած պետության օգնությանը, որպեսզի մեր հայրենիքը պահպանվի եւ զարգանա:

Մեզ ռեալ կերպով կարող են օգնել միայն Եվրոպական Միությունը (ԵՄ) եւ Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ): Նշված երկու միություններն էլ ունեն զարգացած հզոր տնտեսական ու ռազմական պոտենցիալ, քաղաքակրթական բարձր մակարդակ, հումանիզմ եւ հարգանք դեպի մյուս ժողովուրդները, որի հետեւանքով շահերի համընկման դեպքում նրանցից յուրաքանչյուրը կարող է ընդունելել մեզ իր պետական կառույցի մեջ որպես սուբյեկտ, որպեսզի պահպանվի մեր հայրենիքը:

Մեզ անհրաժեշտ է բացահայտ ու կոնկրետ պայմանագրով միավորվել Նշված միավորումներից որեւէ մեկի հետ, որը ավելի արագ եւ ավելի ռեալ պայմաններ կառաջարկի միավորման եւ օգնության համար:

Հաշվի առնելով Հայաստանում ստեղծված արտակարգ պայմանները՝ մենք պետք է միացյալ ուժերով, միայն հայ լինելու հիմքով, հայրենասիրության մղումով, առանց պաշտոններ ու աշխատավարձ պահանջելու, առանց անկարողներին մեղադրելու, իստակ, կոնկրետ քայլերով անհապաղ ազգին դուրս բերեմք ստեղծված արտակարգ իրավիճակից:

Այժմ Ժողովրդավարության պայմաններում մեր երկրի ճակատագիրը կախված է մեզանից, Հայաստանի բոլոր քաղաքացիներից: Հայ ազգը ինքը պետք է որոշի իր գոյատեւման խնդիրը: Այդ գործընթացը սկսելու համար մեզ հարկավոր է անցկացնել ազգային ՀԱՆՐԱՔՎԵ հետեւյալ հարցումով.

«Համաձա՞յն եք, որպեսզի ՀՀ կառավարությունը բանակցություններ վարի ԵՄ-ի եւ ՌՖ-ի հետ հետեւյալ խնդրով. հայ ժողովուրդը հանրաքվեի արդյունքով խնդրում է ընդունել ՀՀ-ն Չեր կենտրոնացված պետական կառույցում (Միություն, Ֆեդերացիա) անվտանգության եւ զարգացման ապահովման նպատակով որպես սուբեկտ՝ պահպանելով իր ազգային ինքնությունը, լեզուն եւ տարածքը»:

Հարցաթերթիկի պատասխանը՝ ԱՅՈ կամ ՈՉ:

Դարերով պայքարած, իր ինքնությունը եւ գենետիկան պահպանած, ժամանակակից արժեքներ կրող ազգը, որի գրողները, կոմպոզիտորները, արվեստագետները տվել են կուլտուրայի շատ բարձրարժեք ստեղծագործություններ, որի կրթված անհատները առանց դժվարության հասնում են պրոֆեսիոնալ զարգացման միջազգային մակարդակի, իրավունք ունի գոյատեւելու եւ հասնելու կայուն, զարգացած, բարեկեցիկ կյանքի:

Ներկայիս սերունդը պետք է դեն նետի իր թմրած վիճակը, տեր կանգնի իր երկրին եւ միացյալ զորավիգ լինի հայրենիքին, ինչպես Սարդարապատում, որպեսզի մեր ազգը չդառնա տարագիր, ու ներկայիս սերունդը չհամարվի անպատասխանատու, մորթապաշտ եւ անճարակ:

1. Մեր հայրենիքը

Հայրենիքը բոլոր ազգերի համար գնալով դառնում է շատ կարեւոր անհրաժեշտություն, եւ մարդիկ ավելի երջանիկ ու վստահ են զգում, երբ գտնվում են իրենց սեփական կայացած, բարեկեցիկ հայրենիքում:

Հայրենիքում ապրելը շատ ավելի լավ է, հեշտ է ու հաճելի, քան օտարության մեջ: Մարդկության զարգացման պատմական այս փուլում մարդը միայն իր հայրենիքում կարող է ապրել միանգամայն երջանիկ եւ լիարժեք կյանքով: Լքելով հայրենիքը՝ մենք բոլորս սկսում ենք զերոյից՝ արագ կորցնելով մեր ինքնությունը, լեզուն, մշակույթն ու կենցաղը՝ միայն աշխատանք ունենալու համար:

Պետք է հիշենք, որ հայրենիքը մեր ընդհանուր տունն է, նրա պահպանման համար դարերի ընթացքում իրենց կյանքն են զոհել բազում հայորդիներ, եւ առանց նրա անհնար է պահպանել մեր ազգը, ապահովել նորմալ, բնականոն կյանք մեր ու հաջորդ սերունդների համար:

Փաստորեն, անկախության այս երեսուն տարիների ընթացքում մենք չկարողացանք ապահովել սահմանների կայունությունը, ստեղծել բավարար աշխատատեղեր, ապրելու համար բարեկեցիկ պայմաններ եւ արտադրել կամ ունենալ ժամանակակից զենքեր: Շարունակվում է արտագաղթը, պետությունը դեռեւս չի կայացել, մենք այժմ անպաշտպան ենք եւ չունենք որեւէ հենման կետ:

Պետության կայացման եւ զարգացման ուղիների որոնումները երբեք չդարձան քննարկման առարկա, այլ որոշվեցին մեր ոչ կոմպետենտ ղեկավարների փանձնյա եւ անբացահայտ որոշումներով, ինչը մեզ հասցրել է այսօրվա վիճակին, երբ մենք անկախության 30 տարիների ընթացքում ոչ թե զարգացանք ու կարողացանք կազմակերպել ներգաղթ, այլ հետ ընկանք մյուս ազգերից ու նվազում, փոքրանում ենք բանակով, որակով եւ տարածքներով:

Նոր սերունդի ներկայացուցիչները ցանկանում են լավ ապրել հենց այսօր. ինչ կլինի վաղը՝ շատ քչերին է հուզում: Հետագա սերունդների համար մտահոգվողներ չկան: Դա ստացել է համընդհանուր բնույթ եւ լայն տարածում է գտել նաեւ ղեկավարման բարձր ոլորտներում: Այդպիսի մթնոլորտը տագնապ է առաջացնում ազգի ապագայի նկատմամբ եւ պարտադրում է կտրուկ, ռեալ եւ անհապաղ միջոցների դիմել հայրենիքը փրկելու համար:

Մեզ առայժմ որոշ չափով օգնում է Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ), սակայն մեր վարած «ճկուն» քաղաքականության հետեւանքով, երբ մենք հաճախակի փարվում ենք ՌՖ-ի թշնամիների հետ, ՌՖ-ն հապաղում է լիարժեք օգնելուց՝ համարելով մեր վարմունքը դավաճանություն:

Մեզ հարկավոր է արագ եւ կտրուկ կողմնորոշվել արտաքին օգնության կամ հենման կետի ընտրության հարցում, որպեսզի չմնանք անպաշտպան, այլ ունենանք հենման կետ: Մեջտեղում մնալը կործանարար է, որովհետեւ մենք անպաշտպան ենք այժմ մեր դարավոր թշնամիների առջեւ, եւ նրանք իրենց նպատակները չեն թաքցնում:

Հենման կետը անմիջապես կապահովի երկրի սահմանների վստահ պաշտպանությունը, եւ մեկ տասնամյակից ավելի կարճ ժամանակահատվածում Հայաստանում կստեղծվի ընդհանուր բարեկեցություն, որը նաեւ սկիզբ կդնի երկրի զարգացմանը եւ հայրենադարձությանը:

Մեր ելակետը պետք է լինի հետեւյալը. բոլոր հայերը սիրում են իրենց, իրենց ընտանիքը, երեխաներին, բարեկամներին, ազգակցներին, ինչ-որ չափով իրենց ազգը եւ, հետեւաբար, հայրենիքը: Այսօր դա է մեր միավորման հիմքը, որովհետեւ հայը երբեք չի սպանի մի այլ անձի միայն նրա հայ լինելու պատճառով:

Մենք, մոռանալով մեր ներքին գժտությունները, պետք է համախմբվենք եւ դուրս բերենք մեր՝ հազարամյակներով գոյատեւած ազգին ստեղծված չարագուշակ իրավիճակից:

Մենք, մոռանալով մեր ներքին գժտությունները, պետք է համախմբվենք եւ դուրս բերենք մեր՝ հազարամյակներով գոյատեւած ազգին ստեղծված չարագուշակ իրավիճակից:

Դարերով պայքարած, իր ինքնությունը եւ գենետիկան պահպանած, ժամանակակից արժեքներ կրող ազգը իր ներկայիս սերունդի սխալների հետեւանքով այսօր կանգնել է կործանման եզրին: Ազգը պետք է հավաքի իր ռեալ, հայրենասիրական ուժերը, ինչպես Սարդարապատում, եւ դուրս գա ստեղծված արտակարգ իրավիճակից:

Ժամանակակից սերունդը պետք է դեն նետի իր թմրած վիճակը եւ զորավիգ լինի իր հայրենիքին, որպեսզի մեր ազգը չդառնա տարագիր, ու մեր սերունդը իր հետնորդների կողմից չհամարվի անպատասխանատու, մորթապաշտ եւ անճարակ:

2. Օգնության հարցը

Մենք սիրում ենք մեր անհաջողությունների համար մեղադրել ուրիշներին՝ առանց հաշվի առնելու, որ ամեն մի երկիր ունի իր պրոբլեմները եւ պաշտպանում է իր շահերը: Մեր անհաջողությունների համար մենք պետք է մեղադրենք մեզ, այլ ոչ թե ուրիշներին. միայն այդպես մտածելով՝ մենք կարող ենք հասնել հաջողության:

Ամեն ազգ՝ որպես մեծ ընտանիք, պետք է ինքը հոգա իր խնդիրները, մտածի իր մասին եւ օգնության կարիքի դեպքում խնդրի ավելի ուժեղին, որ նա փոխշահավետ պայմաններով օգնի իրեն, եւ շնորհակալ լինի դրա համար: Անշնորհակալ վերաբերմունքը ազգերի կողմից հիշվում է երկար եւ չի մոռացվում:

Նշենք մի շատ կարեւոր եւ հայտնի փաստ. Հայաստանի Հանրապետությունը իր ժողովրդով հանդերձ ՍՍՌՄ-ի կազմում հասավ ժամանակակից բարձր զարգացման: Ժամանակակից զարգացման հայ ժողովուրդը չի հասել ոչ անցյալ դարերում եւ ոչ էլ անկախության այս երեսուն տարիների ընթացքում:

Անկախություն ստանալուց հետո ՀՀ կառավարությունը կարող էր ՌՖ-ի հետ ընդհատել ոչ շահավետ գործարքները, իսկ շահավետ գործարքներն ու պայմանագրերը շարունակել, սակայն մեր ոչ կոմպետենտ ղեկավարները ՌՖ-ի նկատմամբ բռնեցին ցուցադրական կոպիտ դիրք Արեւմուտքին հաճոյանալու համար: Նրանք, փաստորեն, արգելեցին ռուսաց լեզուն, կտրեցին բոլոր կենսական կապերը ՌՖ-ի հետ եւ դուրս մղեցին երկրից նրանց ներկայացուցիչների մեծ մասին: Դա մեր կողմից շատ անշնորհակալ քայլ էր եւ շատ նման էր երեխայի ըմբոստանալուն իր խնամակալի դեմ: ՌՖ-ն ըմբռնումով մոտեցավ փոքր երկրի մեծ սխալներին եւ աշխատեց ՀՀ-ի հետ իր համար շահավետ գործերը շարունակել: ՌՖ-ի դիրքը հուշում է, որ մենք առայժմ նրա հետ կարող ենք ունենալ փոխշահավետ համագործակցություն:

Արեւմուտքը, որի համար արվեց այդ բոլորը, մեր կառավարությանը շոյեց, բայց ոչ մի հարցում չօգնեց եւ չդարձավ մեզ հենման կետ, քանի որ Հայաստանի հետ նրանց համագործակցությունը տարբեր օբեկտիվ պատճառներով ձեռնտու չէ: Արեւմուտքին ձեռնտու է, որ Թուրքիան լինի ուժեղ, եւ Հայաստանը լինի նրա կազմում, այսինքն՝ չլինի, վերանա:

Այդ գիծը Արեւմուտքը կայուն կերպով տանում է վերջին 250 տարիների ընթացքում եւ չի փոխի այն նաեւ մոտ ապագայում, քանզի չի փոխվել դրա հիմքը՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի վախը Ռուսաստանի ազդեցության ուժեղացման նկատմամբ: Նրանք շարունակաբար համագործակցում եւ հրահրում են Թուրքիային Ռուսաստանի դեմ: Այդ հիմքի հիման վրա նրանք դարերի ընթացքում աշխատել են ռուս-թուրքական պայմանագրերը կազմել՝ ի օգուտ Թուրքիայի՝ հայկական տարածքները միացնելով Թուրքիային եւ անտեսելով հայերի իրավունքները Թուրքիայում:

Դարեր առաջ դրանում համոզվել են նաեւ մեր արտակարգ ազգանվեր անձինք, եւ նրանք գտնում էին, որ հայերին իրականում կարող է օգնել միայն Ռուսաստանը՝ Իսրաել Օրին, Հովսեփ Էմինը, Մովսես Սարաֆյանը, Հովհաննես Լազարյանը, Ստեփան Տեր-Սահակյանը եւ շատ ուրիշներ:

Պատմությունը փաստում է, որ, սկսած 1700թ. մինչեւ 1990թ., հայ ժողովուրդը եւ նրա ազգասեր մտավորականները հայրենիքը փրկելու միակ իրական դաշնակից դիտել են Ռուսաստանին՝ որպես զարգացած, քաղաքակիրթ եւ հզոր պետության:

Միայն 1991թ. լրիվ անկախություն ստանալուց հետո մեր ղեկավարների մոտ ցանկություն առաջացավ մնալ լրիվ անկախ՝ հույսը դնելով ժամանակակից ցիվիլիզացիայի ստեղծած միջազգային օրենքների եւ կազմակերպությունների վրա, որոնք առայժմ միայն անուժ իլյուզիաներ են: Ժողովրդական բարձր էյֆորիայի պայմաններում անցկացվեց «Անկախությանը՝ այո» հանրաքվեն:

Հանրաքվեի արդյունքով ՀՀ ղեկավար կազմը ստացավ անկախություն, իսկ գործող Սահմանադրության միջոցով ամրագրվեց անպատասխանատու ղեկավարման օրինական իրավունքը:

Որքանով էին ճիշտ այդ քայլերը, այժմ մեզ հայտնի է: Արդյունքում հայ ժողովուրդը ընկավ սարսափելի կախման մեջ իր ղեկավարներից, եւ ժողովրդի համար հայրենիքում ապրելը ու գոյատեւելը դարձավ անտանելի:

ՀՀ հին եւ նոր ղեկավարները պետք է զգան իրենց մեծ պատասխանատվությունը ազգի եւ հայրենիքի գոյատեւման հարցի նկատմամբ, որպեսզի վաստակեն ապագա սերունդների համակրանքը ու չարժանանան նրանց անեծքին:

Ամեն մի սերունդ ազգի կյանքում ունի իր կարեվոր դերը եւ պարտականությունը ազգի կյանքը պահպանելու եւ շարունակելու գործում: Այսօրվա սերունդը պետք է ցուցաբերի զգոնություն, հնարամտություն ու պատասխանատվություն դարերից եկող հայ ազգի գոյատեւման համար: Տեր կանգնի իր երկրին, չկորցնի մեծ դժվարություններով մեզ հասած հայրենիքը, լինի ռեալ եւ հաշվենկատ, խուսափի կործանարար էգոիստական իլյուզիաներից, որպեսզի շարունակվի ազգի կյանքը:

Չգրված Պատմական Ճշմարտություններ

Կան դարերի խորքից եկող սակայն չգրված եղելություններ ու օրենքներ, որոնք գործում են ուժի դիրքերից, սակայն բացատրվում են այլ հանգամանքներով: Ովքեր շատ թե քիչ ծանոթ են պատմությանը, նրանք գիտեն դա:

Հայտնի է որ մարդկության ամբողջ պատմության ընթացքում, հենց առաջին հնարավորության դեպքում, միշտ ուժեղ պետությունները գրավել են ավելի թույլերին: Պատմական բազմաթիվ փաստեր ապացուցում են,որ իրականում տարածքը երբեք չի պատկանել տվյալ վայրում ապրողներին, «Տարածքը միշտ պատկանել է նրա գրավողին կամ սահմանները պաշտպանողին»:

Այդ փաստը ակնառու է բոլոր նախկին իմպերիաների մոտ, ինչպես նաեւ շատ երկրներում, որտեղ խառը ապրում են տարբեր ազգերի ժողովուրդներ: Տարբեր ազգերի համատեղ ապրելը միշտ շատ ավելի հեշտացրել է այդ չգրված օրենքի իրագործումը:

Այդ մտածելակերպը, այդպիսի դրվածքը տրամաբանական կամ հումանիստական չի եւ հաշվի չի առնում բնիկ ժողովուրդների իրավունքները, սակայն այդ չգրված օրենքը համատարած փաստ է եւ բացի թուրքիայից գործել է եւ գործում է նաեւ շատ այլ երկրներում, ուժի եւ վաղեմության իրավունքներով:

Հայ ժողովրդի գբաղեցրած տարածքը, սկսած նախնադարից, հերթականորեն եղել է Պարսկաստանի, Սելեւկյանների, Հռոմի, Արաբների, Թուրք - սելջուկների, Ռուսաստանի իրավասության տակ: Հայերը միշտ պայքարել են, բայց անկախություն ստացել են միայն կարճ ժամանակահատվածներում ու դեպքերի բերումով:

Այժմ նույնպես մեր որոշ հարեւաններ Սովետական Հայաստանի տարածքը (այժմյան ՀՀ տարածքը) համարում են Ռուսական տարածք եւ այդ պատճառով սպասում են որ հայերը ավելի հեռանան Ռուսաստանից որպեսզի հարմար պահին գրավեն այն, հաշվի առնելով որ այսօրվա ցիվիլիզացիան «չի նկատում» այդպիսի գործողությունները, եթե դրանք համընկնկում են իրենց շահերի հետ: Այսօրվա ցիվիլիզացիայի ռեալ կարգախոսն է՝ «Բարոյական է այն ինչը ձեռնտու է»:

Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, երբեք չի ճանաչել եւ այժմ էլ իրականում չի ճանաչում հայերին որպես հողի կամ տարածքի տեր: Թուրքերը չեն համարել հողի տեր նաեւ քրդերին ու անատոլիայում ապրող միյուս բնիկ ժողովուրդներին, որոնք արդեն ձուլվել են թուրքերի հետ:

Թուրքերը միշտ համարել են որ իրենց սահմանը կարող է լինել միայն Ռուսաստանի հետ եւ նրանց պատերազմների հաշտության պայմանագրերը, որտեղ շոշափվում է Հայաստանի տարածքը, կապված են միայն Ռուսաստանի հետ :

Թուրքերի համար անկախ հայաստանի տարածքը համարվում է գրավելու համար ազատ, իրենց նախկին տարածքը, որտեղ միայն վերջերս են անվանափոխվել թուրքական տեղանունները եւ որը իրենցից ուժի միջոցով խլել էր Ռուսաստանը:

Եթե հայերը մնան անպաշտպան, կամ հեռանան Ռուսաստանից, ապա թուրքերը այդ տրամաբանությամբ, հարմար պահին, անմիջապես հետ կգրավեն այն որպես իրենց նախկին տարածքը:

Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, դարերով եւ այսօր էլ առանց թաքցնելու միայն այդ տեսանկյունից է դիտում ՀՀ տարածքը, ինչպես նաեւ մեր տարածաշրջանի անցյալն ու ապագան:

2. Անկախություն

Հայ ժողովուրդը բոլոր դարերում ձգտել է ունենալ «Ազատ -անկախ Հայաստան» եւ 1991 թվականին ստացավ այն: Սակայն շուտով պարզ դարձավ, որ ռեալ անկախություն ստացել են միայն ՀՀ-ի ղեկավարները, իսկ ժողովուրդը ընկել է սարսափելի կախման մեջ իր ղեկավարներից, որոնք չունեն գիտելիքներ եւ պատասխանատվության չափանիշներ իրենց գործունեության համար:

Անկախության սկզբնական տարիներին բազմաթիվ մարդիք կորցնելով աշխատանքը, կորցրեցրեցին նաեւ հույսը ապագայի նկատմամբ, մեծացավ անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ, ժողովրդի մեծ մասի համար ակնառու դարձավ անհատական սովի հնարավորությունը, որը սկսեց խիստ մտահոգել նրանց: Սովի հնարավորությունը մարդկանց մոտ առաջացրեց խուճապ եւ սկսեց գործել ինքնապահպանության բնազդը - «սովի տրամաբանությունը»:

Այդ տրամաբանությամբ խուճապահար ժողովուրդը սկսեց շատ ցածր գներով ($3000- 2 սենյակ, կենտրոնում) վաճառել բնակարանները եւ դուրս գալ երկրից: Սկսվեց մասսայական արտագաղթ, որը շարունակվում է մինչ այժմ: Ովքեր չեին կարող հեռանալ երկրից սկսեցին վաճառել պետական ունեցվածքը, ընտրական ձայները, պետական աշխատատեղերը եւ այլն, միայն թե փրկվեն: Մարդիք սկսեցին մտածել միայն այսօրվա համար: Ապագայի համար արդեն մտածող չկա:

Մեծ դժվարություններով պետական աշխատատեղեր ձեռք բերած անձինք (տեղական իշխանություններ, միլիցիա, բանակ, ընտրական սիստեմ, նախարարություններ) այլեւս չեն ցանկանում որ իշխանությունը փոխվի, որպեսզի չկորցնեն իրենց աշխատանքը, քանի որ նորերը այդ աշխատատեղերը կվաճառեն ուրիշներին: Այդպիսի մթնոլորտը շատ հեշտացնում է ղեկավարների վերընտրվելու, երկրում ցույցերը, բողոքները ճնշելու եւ կայունություն պահպանելու հնարավորությունը:

ՀՀ-ում գոյատեւելու խուճապը օգնեց նաեւ արտասահմանին:Նրանք սկսեցին հովանավորել որոշ անձանց եւ առաջավոր ուսանողներին, որպեսզի ծրագրավորեն նրանց իրենց խնդիրները լուծելու համար:

Այդ քառասային վիճակը շարունակվում եւ խորանում է նաեւ այսօր:

Անկախությունը ավելի կարեվոր է ժողովրդի համար, որպեսզի չդառնա տարագիր, չկորցնի իր լեզուն, գենետիկան, կուլտուրան, սովորույթները, ունենա բարեկեցիկ կյանք, սակայն երկրի ղեկավար կազմի լրիվ անկախությունը պարտադիր պայման չի հանդիսանում: Ղեկավարները իրենց ֆունկցիաների մի մասը կարող են փոխանցել «Միության» կենտրոնական ղեկավարությանը երկրում բարեկեցություն, զարգացում, կայունություն ապահովելու համար: Դա ապացուցում է նաեւ ժամանակակից իրողությունը:

Ժողովուրդը ազատ եւ անկախ է երբ գործում է ժողովրդավարությունը եւ ժողովրդի կարծիքը հաշվի է առնվում, կան բավարար թվով աշխատատեղեր, իսկ գործազուրկները ստանում են նպաստ; արդարադատության համակարգը գործում է հստակ եւ ազնիվ; բոլորը հավասար են օրենքի առջեւ ու ապահով են երկրի սահմանները:

Մեր ղեկավարների անկախության այս երկար ժամանակահատվածում ժողովուրդը այդպես էլ չստացավ դրանցից ոչ մեկը, իսկ ղեկավարները միշտ եղան լրիվ անկախ, անպատասխանատու իրենց գործունեության մեջ եւ միշտ ունեցան կայուն ցոփ կյանք:

Ինչպես ասվեց մեր անկախ ղեկավարները չեն ունեցել եւ չունեն ոչ մի պատասխանատվություն իրենց գործունեության համար: Լավ իմանալով մեր հիմնական Օրենսգիրքը նրանք միշտ համոզված են որ իրավունք ունեն անել ինչ որ ցանկանում են, առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու:

Մեր Կոնստիտուցիան լրիվ համապատասխանում է այդպիսի մտածելակերպի եւ գործունեության ոճի հետ, քանիվոր այնտեղ իշխանությունների գործունեությունը իրավակարգում է հետեւյալ անորոշ բառերով՝ «հնարավորության սահմաններում աջակցել, խթանել, խրախուսել, ձգտել, նպատակադրվել»: Այդ կերպ առաջացած եւ օրենքի ուժ ստացած անպատասխանատվության մթնոլորտը հնարավորություն է տալիս որ ցանկացած անձ «ղեկավարի» Հայաստանը:

Այս վիճակը համընկնում է ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի նշած օրինակի հետ՝ «Ուղղաթիռի մոտ հավաքված բազմությանը հարցնում են՝ ովքեր կարող են վարել այս ուղղաթիռը, թող առաջ գան: Ոչ ոք չի առաջանում: Տալիս են երկրորդ հարցը՝ ովքեր կարող են ղեկավարել այս երկիրը, թող առաջ գան - բոլորը վազում են առաջ»: Այս ցայտուն օրինակը շեշտում է պատասխանատվության բացակայությունը երկրի ղեկավարման գործում:

Անկախությունը առաջի հերթին անհրաժեշտ է ժողովրդին:

3. Ինչ է Ապահովում Այսօրվա Ցիվիլիզացիան

Այսօրվա առաջատար հանրությունը՝ ներկայիս ցիվիլիզացիան ճիշտ հասկանալով ու նշելով մարդկության ապագա զարգացման բարձր իդեալները եւ ուղենիշները դեռեւս չի կարողանում ռեալ կերպով տարանջատվել իր դարավոր, կիսավայրենի անցյալից ու իրականացնել այդ իդեալները, որոնցից առաջնայիններն են՝ բոլոր ազգերի ու երկրների համընդհանուր հավասարության սկզբմունքը (հավասար հնարավորությունների ապահովումը), բարիության ու մարդասիրության սկզբմունքը, անձի ազատությունը եւ ձգտումը դեպի պրոգրեսս:

Մեծ դժվարություններով կիսապահպանվող ազգերի հավասար հնարավորությունների սկզբմունքը, իհարկե կոչված չի ապահովելու ապրելակերպի հավասարություն: Ապրելակերպը կախված է տվյալ երկրի ռեսուրսներից եւ ունեցած հնարավորությունների էֆեկտիվ օգտագործումից: Ազգերը եւ անհատ մարդիք իրենց կարողություններով շատ տաբեր են եւ հավասար հնարավորությունների դեպքում նույնպես հասնում են տարբեր արդյունքների:

Ազգերի կարողությունների տարբերությունը հիմնականում բացատրվում է ազգերի ունեցած ներուժով որը նույնպես հավասար պայմանների դեպքում բերում է ազգերի տարբեր զարգացման աստիճանների: Այդ պատճառով առաջավոր եւ հզոր պտությունները պահպանելով հավասարության սկզբմունքը ոչինչ չեին կորցնի այլ միայն կշահեին: Սակայն դեռեւս ամեն մի ազգ մնում է իր ազգային շահերի պաշտպանության մարտիկը, հաշվի առնելով որ ժողովուրդները դեռեւս լրիվ չեն հասունացել հավասարության եւ արդարության սկզբմունքները արդար պահպանելու համար:

Առայժմ միջպետական հարաբերություններում ռեալ գործում է «Բարոյական է այն ինչը ձեռնտու է» չգրված կարգախոսը:

Այսօրվա ցիվիլիզացիան ապահովում է միայն մարդկության զարգացման բարձր իդեալների՝ իմացությունը, ձգտումը ու տարածումը, սակայն դեռեւս ոչ մի երկիր միջազգային հարաբերություններում չի ղեկավարվում եւ չի պահպանում այդ իդեալները:

Այսօրվա ցիվիլիզացիան թույլ պետություններին չի տալիս գոյատեւելու ոչ մի երաշխիք, խոստումները դիտվում են որպես անցողիկ ցանկություններ, ռեալ գործում են միայն կնքված փոխշահավետ պայմանագրերը:

4. Ազգի Ներուժը

Ազգի ներուժը նրա զարգացած, միջազգային բարձր պրոֆեսիոնալ մակարդակի հասած մարդկանց քանակն է՝ Գիտության, Կուլտուրայի, Տեխնոլոգիաների, Ալգորիթմների եւ Ծրագրավորման, Ֆինանսական, Առողջապահության, Միջազգային հարաբերությունների եւ Մենեջմենտի բնագավառներում: Ազգի ներուժը միշտ բացարձակ, քանակական մեծություն է եւ պետությունները ունեն այդ սատիստիկան:

Ներուժի մեծությունը հիմնականում կախված է՝ տվյալ երկրի բնակչության քանակից, կրթական սիստեմի որակից, երկրի զարգացման օրենքներից եւ իշխանությունների կողմից զարգացման լծակների ճիշտ ընկալումից ու կիրառումից:

Երկրում բարեկեցություն ու զարգացում ապահովելու համար ազգի ներուժը ազգի ունեցած ռեսուրսներից ամենակարեւորն է:

Միայն գիտելիքներով զինված մասնագետներն են հնարավոր դարձնում երկրի զարգացումը, ղեկավարվելով պլանավորված նպատակային ծրագրերով, ռեալ եւ արդար իրավական դաշտի առկայության պայմաններում: Այդպիսի պայմանների գոյության դեպքերում ինվեստորներ միշտ գտնվում են:

Ջարգացած պետությունները մեծ ուշադրություն են դարձնում ազգի ներուժի աճին ու նաեւ պայմաններ են ստեղծում դրսից բարձրորակ մասնագետներ ընդունելու համար:

Մենք բոլորս դեռեւս դպրոցում տեսնում ենք, որ կան գերազանցիկ, լավ, միջակ եւ թույլ սովորող աշակերտներ, որոնք ունեն տարբեր ընդունակություններ: Հաշվի ենք առնում նաեւ որոշ անհատների մոտ ընդունակությունների զարգացման տարբեր ժամանակատարիքային հատվածների առկայությունը, սակայն միշտ մեծ հաջողությունների են հասնում ավելի շուտ զարգացողները, որովհետեւ մարդկանց ակտիվ գործունեության տիրույթը այժմ կազմում է մոտ 30-35 տարի, իսկ ուշ զարգացումը խանգարում, կամ կրճատում է այն:

Այժմ Հայաստանում «Ազգային Ներուժը» շատ փոքր է նույնիսկ հարաբերական կամ տոկոսային առումով, քանզի նրանց համար հայաստանում պահանջարկ չկա:

Կառավարությանը այդ հարցը երբեք չի մտահոգել, մեր կրթական սիստմը միջազգային չափանիշներով ունի ցածր որակավորում, իսկ արտակարգ ընդունակություններով օժտված եւ աշխատասեր ուսանողները, որոնք բոլոր դեպքերում հասնում են զարգացման բարձր աստիճանի, մեծամասնամբ հեռանում են հայաստանից իրենց գիտելիքներին համապատասխան զարգացում եւ կիրառում գտնելու նպատակով:

5 Հայ Ժողովրդի Բարեկեցության Խնդիրը

Բոլոր ազգերն էլ ձգտում են ունենալ Ժամանակակից, կայուն բարեկեցիկ կյանք իրենց հայրենիքում, որտեղ ապահովվում է մայրենի լեզվով խոսելու իրավունքը; երկրի սահմանները վստահ պաշտպանվում են թշնամիներից; կա համեմատաբար բարձր կենսամակարդակ; բացակայում են կրիմինալ էլեմենտները եւ կոռուպցիան; զարգանում են արդյունաբերությունը եւ ժամանակակից գյուղատնտեսությունը, գիտությունը, տեխնոլոգիաները, կուլտուրան, արվեստը; կան բավարար աշխատատեղեր; գործում են ողջամիտ եւ մատչելի առողջապահական եւ սոց-ապահովման համակարգերը; տրվում է անվճար ընդհանուր կրթություն; հստակ եւ ազնիվ գործում է արդարադատության համակարգը; բոլորը հավասար են օրենքի առաջ; կա վստահություն ապագայի նկատմամբ; տնից դուրս գալով մարդիք հանդիպում են իրենց համար սովոր, հարազատ դիմագծերով անցորդների, որոնց հետ ունեն ընդհանուր սովորույթներ ու բարքեր:

Նշված պայմանների ապահովման դեպքում համարվում է որ երկիրը կայացել է եւ դարձել է տվյալ ազգի համար ռեալ Հայրենիք, ընդհանուր օջախ, որտեղ ազգը բարգավաճում է:

Բարեկեցության ապահովումը համարվում է բոլոր ազգերի գլխավոր խնդիրը:

Բարեկեցության պայմանների գնահատման չափանիշները շատ բազմազան են, սակայն կա մեկ հավաքական չափանիշ որը ճշգրիտ ցույց է տալիս թե տվյալ երկիրը բարեկեցիկ է թե ոչ, դա արտագաղթն է: Եթե կա որոշակի արտագաղթ եւ հայերը գերադասում են օտար երկրները իրենց հայրենիքից, ուրեմն այն դեռ չի կայացել եւ հիմնականում չի բավարարում Հայրենիք հասկացության կամ բարեկեցության պայմաններին:

Բազմաթիվ ազգեր եւ ժողովուրդներ Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում ստեղծել են եւ ունեն կյանքի բարեկեցիկ պայմաններ: Բարեկեցության խնդիրը հաջող լուծել են ինչպես անկախ, այնպես էլ այդ նպատակով, բայց տարբեր հիմունքներով միավորված շատ երկրներ ու միություններ:

Ժամանակակից բարեկեցիկ կյանքի պայմանները կտրուկ տարբերվում են մեկ դար առաջվա պայմաններից իրենց բազմազանությամբ եւ ճոխությամբ: Բարեկեցության բաղադրիչների այդպիսի արագ աճը կապված է նոր տեխնոլոգիաների եւ սարքավորումների ստեղծման հետ:

Այդ բազմազանությունը ապահովելու համար շատ երկրներ, շատ ազգեր միանում են ավելի զարգացած երկրներին, իրենց անկախության մի մասը կորցնելու հաշվին, որպեսզի միացյալ ուժերով ստեղծեն ու պահպանեն իրենց երկրի բարեկեցությունը, քանի որ ազգի բարեկեցությունը ազգի գոյության գլխավոր պայմանն է, իսկ ազգը պետք է ապրի եւ գոյատեվի:

Ակնառու է որ պետությունների ցանկացած միավորում բերում է նրանց որոշ միջպետական եւ ներքին ֆունկցիաների միավորմանը: Այդպիսի միություններից կարելի է նշել՝ Եվրոպական Միությունը (ԵՄ) եւ Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ), որոնց գոյությունը հիմնականում պայմանավորված է ընդհանուր բարեկեցություն ապահովելու նկատառումներով: Չնայած միավորման տարբեր սխեմաներին, նշված այս երկու միություններում էլ մասնակից պետությունները հավասարաչափ կորցրել են իրենց անկախությունը, դրա մի մասը տալով միության ղեկավարման կենտրոնական օրգաններին:

Բարեկեցություն ստեղծելու սկզբնական էտապում հ

ԿԱՐԾԻՔ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային քննարկման է ներկայացվել Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության եւ զարգացման 2023-2027թթ. ռազմավարությունը եւ ռազմավարության գործողությունների պլանը:



Մշակույթի պահպանության եւ զարգացման 2023-2027թթ. ռազմավարությունը սահմանում է առկա մարտահրավերներին արձագանքող եւ ՀՀ կառավարության առաջնահերթություններից ու ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններից բխող՝ ոլորտի զարգացման գերակայությունները եւ դրանց հասնելու արդյունավետ ճանապարհը:

Ռազմավարության մշակման անհրաժեշտությունը բխում է ոլորտի առջեւ ծառացած խնդիրներին համալիր լուծում տալու եւ մեկնարկած բարեփոխումները համակարգելու հրամայականից:

Ռազմավարության համար հիմնաքարային են մշակութային ժառանգության պահպանության, հասարակության եւ անհատի՝ մշակութային կյանքին մասնակցության եւ ստեղծագործական ազատության իրավունքի ապահովումը, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրությունը, որով սահմանվում են իրավական երաշխիքները:

Ռազմավարության հիմքում ընկած են ազգային ինքնության եւ արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, ազգային եւ համամարդկային արժեքների հետ զուգորդումը եւ հաղորդակցումը, համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի եւ արվեստի հասանելիությունը, ստեղծարարության, փորձարարական ու նորարարական ձեւերի խրախուսումը: Առանցքային են մշակույթի տնտեսականացումը, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն ու կարողությունների զարգացումը, մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրումը, պետություն-մասնավոր հատված համագործակցության փոխշահավետ մեխանիզմների խթանումը, ժողովրդավարական արժեքների գերակայության ամրապնդումը, աշխարհի մշակութային քարտեզում հայկական մշակույթի դիրքավորումը:

Ռազմավարության կարեւորագույն ուղղություններն են՝

- մշակույթն ազգային ինքնության կայացման եւ համընդհանուր արժեքային հենքով միջազգային համակեցության պայման է,
- մշակույթն արժեքահեն քաղաքացու կրթության եւ դաստիարակության գրավականն է, մարդկային կապիտալի զարգացման կարեւորագույն պայմանը,
- մշակույթն ազատ եւ երջանիկ քաղաքացու ձեւավորման պայման է,
- մշակույթն անձի ստեղծագործական ազատության, ոգեղենության արտահայտման եւ ինքնադրսեւորման միջոց է,
- մշակույթը հանրային համերաշխության եւ բարեկեցիկ հասարակության ձեւավորման երաշխիք է,
- մշակույթը միջազգային համագործակցության ընդլայնման գործոն է:

Ռազմավարությունը կառուցված է մշակութային ժառանգության եւ ժամանակակից արվեստի բնագավառների համընդգրկուն վերլուծություններին ուղղված գործիքակազմի եւ մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի դիտարկման եւ օգտագործման համար անհրաժեշտ միջոցառումների առաջարկների հենքի վրա:

Ռազմավարությունն ամրագրում է ոլորտի զարգացման տեսլականը ու նպատակները, ինչպես նաեւ նախանշում է բարեփոխումներից ակնկալվող արդյունքները եւ ազդեցությունը անհատի եւ հասարակության վրա:

Ռազմավարության մշակման գործընթացը եղել է առավելագույնս մասնակցային՝ ընդգրկելով մասնագիտական հանրության եւ միջազգային կազմակերպությունների առաջարկները: Միաժամանակ փաստաթղթով ամրագրվում է դրա վերանայման ճկուն համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռելու արձագանքել հարափոփոխ մարտահրավերներին եւ ունենալ բավարար ճկունություն ճգնաժամային իրավիճակներում: Ավելին՝ իբրեւ առանցքային խնդիր է դիտարկվում հանրային լայն հաղորդակցումը՝ միտված մասնակցության ու հաշվետվողականության սկզբունքների պահպանմանը:

Ռազմավարությունը եւ միջոցառումների ծրագիրը մշակվել են՝ ի կատարումն 2021 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1902-Լ որոշման հավելված 1-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 1-ին կետի 1.2 ենթակետի:

Քաղաքացիները եւ շահառու խմբերն իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ ս.թ. դեկտեմբերի 21-ը:

ԼՈՒՐԵՐ

ԿՈՐՑՐԵԼ Է ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԻՐՔԸ

Ամերիկացի գործարար Իլոն Մասկը կորցրել է առաջատարի դիրքն ամերիկյան Forbes պարբերականի Real Time Billionaires (իրական ժամանակում միլիարդատերեր) վարկանիշային ցուցակում: Նա վերջին մեկ օրվա ընթացքում կորցրել է 4,5 մլրդ դոլար կամ իր ընդհանուր կապիտալի 2,49%-ը: Նրանից առաջ է անցել Louis Vuitton Moet Hennessy-ի նախագահ Բեռնար Առնոն Ֆրանսիայից: Ըստ Forbes-ի տվյալների՝ Tesla եւ SpaceX ընկերությունների հիմնադիրի կարողությունը գնահատվում է 176,8 միլիարդ դոլար, իսկ LVMH-ի ղեկավարինը՝ 188,6 միլիարդ դոլար: Նախորդ օրվա ընթացքում Մասկը կորցրել է 4,5 մլրդ դոլար կամ իր կապիտալի 2,49%-ն այն դեպքում, երբ Առնոն, ընդհակառակը, իր կարողությունն ավելացրել է 2,7 մլրդ դոլարով (+1,44%): Երրորդ հորիզոնականը զբաղեցրել է հնդիկ մագնատ Գաուտամ Ադանին, որն այս տարի շատ մեծ արագությամբ բարձրացել է աշխարհի ամենահարուստ մարդկանց ցուցակում: Նրա կարողությունը գնահատվում է 134,5 մլրդ դոլար: Ադանիի Adani Enterprises Ldt ընկերության բաժնետոմսերն այս շաբաթ հասել են ռեկորդային բարձր մակարդակի, իսկ նրա խմբի որոշ ընկերությունների բաժնետոմսերը 2020 թվականից ի վեր աճել են ավելի քան 1000 տոկոսով: Ամերիկացի ձեռնարկատեր Ջեֆ Բեզոսը, որի կարողությունը գնահատվում է 115,7 մլրդ դոլար, ցուցակում զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը: Նա Amazon.com ինտերնետ-ընկերության հիմնադիրն է, Blue Origin օդատիեզերական ընկերության հիմնադիրն ու սեփականատերը, The Washington Post հրատարակչական տան սեփականատերը: Ցուցակում առաջատարների հնգյակը եզրափակել է ամերիկացի ձեռնարկատեր, աշխարհի խոշորագույն եւ առավել հայտնի ներդրողներից մեկը՝ Ուորեն Բաֆեթը՝ 108,3 մլրդ դոլար կարողությամբ: Նա Berkshire Hathaway ամերիկյան հոլդինգային ընկերության սեփականատերն է: Իսկ հայտնի ձեռնարկատեր եւ հասարակական գործիչ, Microsoft ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը զբաղեցրել է վեցերորդ հորիզոնականը: Նրա կարողությունը գնահատվում է 106,9 մլրդ դոլար:

ՌԻՎԱԼԴՈՆ ՎՍՏԱՀ Է

Բրազիլիայի հավաքականի նախկին խաղացող, աշխարհի չեմպիոն Ռիվալդոն վստահ է, որ Արգենտինայի հավաքականը կնվաճի աշխարհի չեմպիոնի կոչումը: «Աշխարհի առաջնության եզրափակչում Բրազիլիան հանդես չի գա, եւ ես կերկրպագեմ Արգենտինային: Մեսին արդեն վաղուց արժանի է աշխարհի չեմպիոնի կոչմանը: Աստված ամեն ինչ գիտի եւ կիրակի կպարգեւի նրան այդ տիտղոսը: Լեո՛, դու արժանի ես այդ տիտղոսին քո ցուցադրած հրաշալի ֆուտբոլի համար»,- սոցիալական ցանցերում գրել է Ռիվալդոն: Կիսաեզրափակչում Արգենտինան 3:0 հաշվով հաղթել է Խորվաթիային: Եզրափակիչի մյուս ուղեգիրը դեկտեմբերի 14-ին կվիճարկեն Ֆրանսիայի եւ Մարոկկոյի հավաքականները:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան ք., Լալայան փողոց, 2 հասցեում գտնվող 136 ք.մ. կաթսայատուն, 252 ք.մ. պահեստներ, 58,8 ք.մ. պահակատուն, 30 ք.մ. ենթակայան, 504 ք.մ. փայտամշակման արտադրամաս, 504 ք.մ. մետաղամշակման արտադրամաս, 1700,1 ք.մ. կարի արտադրամաս, 288 ք.մ. ճաշարան եւ 1,38 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 92000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 03.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

● *Դեկտեմբերի 15-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա «ՄԱՍՍԻՄՈ ՍՊԱԴԱ» Խաչատրյանի անվան 10-րդ միջազգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս են պարզում օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը:
Հերմինե Հայրապետյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմեր կիրառելիս դատարանը կամ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ այդ նորմերի բովանդակությունը պարզում են համապատասխան օտարերկրյա պետությունում՝ դրանց պաշտոնական մեկնաբանությանը եւ կիրառման պրակտիկային համապատասխան: Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու նպատակով դատարանը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ կարող են սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա իրավասու մարմիններ՝ համապատասխան պարզաբանում ստանալու համար, կամ ներգրավել փորձագետների:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնելու օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը հավաստող այն փաստաթղթերը, որոնց վրա նրանք հիմնվում են իրենց պահանջներն ու առարկությունները հիմնավորելու համար, կամ այլ կերպ՝ աջակցել դատարանին եւ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններին եւ այլ մարմինների՝ օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու համար:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ է իրենից ներկայացնում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը:
Ֆրիդա Դավթյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաեւ կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են Վերաքննիչ դատարան անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, դատարան հասցեագրված բողոքներ ստանալով, պարտավոր է գրանցել դրանք եւ ուղարկել ըստ ընդդատության՝ այդ մասին տեղյակ պահելով հսկող դատախազին:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը եւ դատարանի որոշումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամ Սամվել Գասպարյանը դարձել է բրոնզե մեդալակիր աշխարհի առաջնությունում:

Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնության 102 կգ քաշային կարգում նա երեք մոտեցումներից մեկով բարձրացրել է 175 կգ (փոքր ոսկի), իսկ հրում վարժությունում կարողացել է բարձրացնել 214 կգ: Երկամարտի 389 կգ արդյունքով Գասպարյանը դարձավ աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.12.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: